ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՁԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գոռ Միրզոյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Մաքսանենգությունների, ինչպես և հանցավոր վարքագծի այլ դրսևորումների կրիմինալոգիական բնութագրի հիմնական տարրերից մեկը հանցագործի անձն է: Վերջինս մասնագիտական գրականության մեջ պարզաբանվում է որպես տիպային հասկացություն, որի միջոցով բնութագրվում է որոշակի կենսաբանական և սոցիալական առանձնահատկություններ ունեցող այն անձը, ով հանցանք է կատարել[1]:

Հարկ է նշել նաև, որ «հանցագործի անձը» կրիմինալոգիական հասկացություն է, որն օգտագործվում է հանցավոր վարքագծի պատճառներն ուսումնասիրելու համար[2]: Ուստի այն ներառում է անձնային այնպիսի հատկություններ, որոնք այլ հանգամանքների համակցությամբ պայմանավորում են հանցանքի կատարումը: Այսինքն, հանցագործի անձի ուսումնասիրությունը պետք է հնարավորություն տա բացահայտելու հանցանք կատարողին բնութագրող այն առանձնահատկությունները, որոնք կարող են կանխարգելիչ ներգործության օբյեկտ հանդիսանալ, ինչպես նաև՝ սոցիալական այն պայմանները, որոնցում այդ առանձնահատկությունները ձևավորվել են[3]:

Այսպիսով, մաքսանենգությունների դեմ պայքարը չի կարող արդյունավետ լինել առանց դրանք կատարողների անձնային հատկանիշների գիտականորեն հիմնավորված համալիր հետազոտությունների արդյունքների օգտագործման: Ուստի հանցավոր այս արարքը կատարողների անձը բնութագրող առանձնահատկությունների բացահայտումը ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն ունի:

Այս համատեքստում հարկ ենք համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետությունում հանցավոր մաքսանենգություն կատարողների անձը բնութագրող սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական այն առանձնահատկություններին, որոնք կարող են նպաստել քննարկվող հանցագործություններին դրդող գործոնների բացահայտմանը և դրանց կանխարգելման հիմնական ուղղությունների մշակմանը:

Հայաստանի Հանրապետության 2004-2014 թթ. պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում մաքսանենգություն կատարողների կազմում գերակայում են 30-49 տարեկան, արական սեռի, նախկինում չդատված ՀՀ քաղաքացիները (տե՛ս աղյուսակ 1):

---

[1] Տե՛ս **Астемиров З. А.** Криминология: Курс лекций. Махачкала: ИПЦ ДГУ, 2002, էջ 57:

[2] Տե՛ս **Курганов С. И.** Основы криминологии: Учебное пособие. М.: «NOTA BENE», 1998, էջ 55:

[3] Տե՛ս **Абдуллаева Х А.** Личностная характеристика субъектов контрабанды наркотических средств и психотропных веществ // Актуальные проблемы российского права, 2008, № 1, էջեր 263-264:

Աղյուսակ 1

Տեղեկություններ ՀՀ-ում 2004-2014 թթ. ընթացքում մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկված անձանց վերաբերյալ

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	Ընդ.
ընդամենը անձ	**43**	**39**	**76**	**77**	**62**	**72**	**123**	**90**	**54**	**53**	**81**	**770**
16-17 տարեկան	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
18-24 տարեկան	2	0	1	4	1	4	6	13	2	4	5	**42**
25-29 տարեկան	5	6	9	11	7	10	27	9	6	11	12	**113**
30-49 տարեկան	30	22	53	49	44	44	71	56	30	23	53	**475**
50 և ավելի տարեկան	6	11	13	13	10	14	19	12	16	15	11	**140**
իգական սեռի	3	9	12	10	2	7	6	6	8	2	4	**69**
օտարերկրացի	8	16	37	15	14	23	59	28	21	14	27	**262**
այդ թվում՝												
ԱՊՀ քաղաքացի	*1*	*4*	*3*	*1*	*1*	*2*	*1*	*1*	*0*	*0*	*1*	**15**
Իրանի քաղաքացի	*4*	*7*	*16*	*5*	*10*	*18*	*50*	*22*	*15*	*10*	*19*	**176**
Թուրքիայի քաղաքացի	*0*	*1*	*0*	*0*	*0*	*0*	*1*	*1*	*0*	*1*	*1*	**5**
այլ պետ. քաղաքացի	*3*	*4*	*18*	*9*	*3*	*3*	*7*	*4*	*6*	*3*	*6*	**66**
նախկինում դատված	3	2	3	3	0	3	2	5	0	0	4	**25**

Ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ նշված ժամանակահատվածում անչափահասները մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ընդհանրապես չեն ենթարկվել: Տվյալ հանգամանքը, մեր կարծիքով, պայմանավորված է նրանով, որ քննարկվող հանցանքի կատարումը պահանջում է որոշակի գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և ունակություններ, որոնք առավել բնութագրական են համապատասխան կենսափորձ (այդ թվում՝ աշխատանքային գործունեության ստաժ) ունեցող անձանց:

Այդ առումով պատահական չէ, որ մաքսանենգությունները, Հայաստանի Հանրապետության պաշտոնական վիճակագրության համաձայն, բավականին հաճախ (գրանցված դեպքերի 60%-ից ավելին) կատարում են մասնավոր ձեռնարկատիրական գործունեություն (այդ թվում՝ չգրանցված) իրականացնողները, առևտրային որևէ կազմակերպության աշխատակիցները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները, ովքեր հաճախ աշխատանքի (զբաղմունքի) բերումով կամ անձնական նպատակներով հնարավորություն են ունենում հատելու երկրի պետական (այդ թվում՝ մաքսային) սահմանը: Մաքսանենգություն կատարողների մնացած մասը մշտական աշխատանք կամ եկամուտի որոշակի աղբյուր չունեցողներն են, գործազուրկները, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները, կենսաթոշակառուները, գյուղատնտեսությամբ զբաղվողները և այլ զբաղմունք ունեցողները:

Բացի դրանից, ինչպես մեր, այնպես էլ տարբեր տարածաշրջաններում և ժամանակահատվածներում իրականացված այլ հետազոտությունների արդյունքները վկայում են, որ մաքսանենգություն կատարողները, որպես կանոն, ոչ միայն համարձակ և խելացի, այլև համապատասխան իրավակարգավորումներին և մաքսային հսկողություն իրականացնողների հոգեբանական առանձնահատկություններին քաջատեղյակ մարդիկ են: Դա բնականաբար ենթադրում է նաև որոշակի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ունակությունների և կենսափորձի առկայություն: Այդ իսկ պատճառով նման հանցավոր դրսևորումների դեմ պայքարը միշտ և ամենուր կապված է լուրջ բարդությունների հետ, ինչը պահանջում է որոշակի փորձ ու գիտելիքներ[1]:

Վերոհիշյալի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում հանցավոր մաքսանենգություն կատարողների մեծ մասը 30-ից բարձր տարիք ունեցող անձինք են: Ընդ որում, նման ցուցանիշները բնութագրական են նաև այլ պետություններում կատարված մաքսանենգությունների համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց[2]:

Հայաստանի Հանրապետությունում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց տարիքային առանձնահատկությունների կապակցությամբ հարկ է նշել նաև, որ 30-49 տարեկանների մասնաբաժինը 61.7% է, 50 և ավելի տարեկաններինը՝ 18.2%, 25-29 տարեկաններինը՝ 14.7%, իսկ 18-24 տարեկաններինը՝ 5.4%: Այսինքն, 30-ից բարձր տարիք ունեցողների մասնաբաժինն ընդհանուր առմամբ կազմում է 79.9%, իսկ 18-29 տարեկաններինը՝ 20.1%:

Բացի դրանից, ՀՀ-ում մաքսանենգություն կատարելու համար պատասխանատվության ենթարկված անձանց կազմում 30-49 տարեկանների մասնաբաժինն առավել մեծ է եղել 2008 թվականին (71.0%), իսկ առավել փոքր՝ 2013 թվականին (43.4%): Իսկ 50 և ավելի տարեկանների մասնաբաժինն առավել մեծ է եղել 2012 թվականին (29.6%), առավել փոքր՝ 2011 թվականին (13.4%), 25-29 տարեկանների մասնաբաժինն առավել մեծ է եղել 2010 թվականին (22.0%), իսկ առավել փոքր՝ 2011 թվականին (10.0%), մինչդեռ 18-24 տարեկանների մասնաբաժինն առավել մեծ է եղել 2011 թվականին (14.4%), իսկ առավել փոքր՝ 2005 թվականին, երբ նրանցից ոչ ոք չի ենթարկվել պատասխանատվության:

Ներկայացված տվյալներից կարելի է եզրակացնել նաև, որ քննարկվող անձանց նվազագույն և առավելագույն մասնաբաժիններում նկատելի են զգալի տատանումներ: Մասնավորապես, 30-49 տարեկանների պարագայում համապատասխան վարիացիայի ամպլիտուդան կազմում է 27.6, 50 և ավելի տարեկանների պարագայում՝ 16.2, 25-29 տարեկանների պարագայում՝ 12.0, իսկ 18-24 տարեկանների պարագայում՝ 14.4: Այսինքն, միջինացված թվերով համեմատաբար կայուն են 25-29 տարեկանների մասնաբաժնի վերաբերյալ ցուցանիշները:

Կրիմինալոգիական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկված անձանց տարիքի վերաբերյալ տվյալներն՝ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի տարբեր մասերի (տե՛ս աղյուսակ 2-ը):

---

[1] Տե՛ս **Некрасова Т. А.** Понятие контрабанды. Содержание, состав преступления, его анализ, а также способы совершения // Известия Южного федерального университета. Актуальные проблемы права, 2003, № 5 (34), էջ 272:

[2] Տե՛ս **Душкин С. В.** Особенности личности преступника, совершившего контрабанду в Российской Федерации // Общество и право, 2011, № 2(34), էջեր 196-197:

Աղյուսակ 2

Տեղեկություններ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի տարբեր մասերով պատասխանատվության ենթարկված անձանց տարիքի վերաբերյալ

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	Ընդ.
ընդամենը անձ	43	39	76	77	62	72	123	90	54	53	81	770
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	25	30	46	62	48	38	58	53	25	30	39	454
հոդվ. 215, մ. 2	13	9	26	14	12	32	42	32	29	22	39	270
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	2
հոդվ. 215, մ. 4	5	0	4	1	1	2	23	5	0	0	3	44
18-24 տարե-կան	2	0	1	4	1	4	6	13	2	4	5	**42**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	1	0	1	3	1	1	2	8	0	3	3	**23**
հոդվ. 215, մ. 2	1	0	0	1	0	2	2	2	2	1	2	**13**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	0	0	0	1	2	3	0	0	0	**6**
25-29 տարե-կան	5	6	9	11	7	10	27	9	6	11	12	**113**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	3	5	6	6	7	5	13	5	1	7	6	**64**
հոդվ. 215, մ. 2	2	1	3	5	0	5	6	4	5	4	6	**41**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	0	0	0	0	8	0	0	0	0	**8**
30-49 տարե-կան	30	22	53	49	44	44	71	56	30	23	53	**475**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	19	17	30	42	31	23	33	31	17	13	27	**283**
հոդվ. 215, մ. 2	6	5	19	7	11	21	25	24	13	9	23	**163**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	**2**
հոդվ. 215, մ. 4	5	0	4	0	1	0	13	1	0	0	3	**27**

50 և ավելի տարեկան	6	11	13	13	10	14	19	12	16	15	11	**140**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	2	8	9	11	9	9	10	9	7	7	3	**84**
հոդվ. 215, մ. 2	4	3	4	1	1	4	9	3	9	8	8	**54**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	0	1	0	1	0	0	0	0	0	**2**

Ներկայացված աղյուսակից նախ և առաջ հետևում է, որ ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարողների կեսից ավելին (59.0 %-ը) պատասխանատվության է ենթարկվել ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով՝ մաքսանենգության հասարակ տեսակի համար: Նրանց հաջորդում են նույն հոդվածի 2-րդ մասով (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, խիստ ներգործող, թունավոր, թունավորող, ռադիոակտիվ նյութերի, ռազմական նշանակության արտադրանքի, նման արտադրանք չհամարվող պայթուցիկ նյութերի և սարքերի, զենքի՝ բացի ողորկափող որսորդական հրազենից և դրա փամփուշտներից, միջուկային, քիմիական, կենսաբանական կամ զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենքի, երկակի նշանակության ապրանքների ռազմավարական տեսակետից կարևոր հումքային ապրանքների կամ մշակութային արժեքների, որոնց տեղափոխման համար սահմանված են հատուկ կանոններ, մաքսանենգությունը) պատասխանատվության ենթարկվածները, որոնց մասնաբաժինը կազմում է 35.1%: Ընդ որում, նրանց շարքում գերակայում են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, ինչպես նաև խիստ ներգործող, թունավոր, թունավորող և ռադիոակտիվ նյութերի մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկվածները:

ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարողների 5.6%-ը պատասխանատվության է ենթարկվել ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 4-րդ մասով՝ կազմակերպված խմբի կողմից մաքսանենգություն կատարելու համար: Քննարկվող հանցագործության համար նշված ժամանակահատվածում քրեական պատասխանատվության ենթարկվածների կազմում ամենափոքր մասնաբաժինը (0.3%) ունենք ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով (մաքսանենգություն, որը կատարվել է՝ 1) պաշտոնատար անձի կողմից պաշտոնեական դիրքն օգտագործելով, 2) մաքսային հսկողության որոշակի ձևերից ազատված անձի կողմից կամ մաքսային հսկողության սահմանված ձևերից ազատված առանձին ապրանքների կամ տրանսպորտային միջոցների՝ մաքսային սահմանի վրայով տեղափոխման համար լիազորված անձի կողմից և 3) մաքսային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով) նախատեսված արարքները կատարողները: Վերջիններիս շարքում, իրենց հերթին, գերակայում են պաշտոնեական դիրքն օգտագործելով մաքսանենգություն կատարող պաշտոնատար անձինք, որոնց հաջորդում են մաքսային հսկողություն իրականացնող անձի նկատմամբ բռնություն գործադրելով մաքսանենգություն կատարողները:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ համանման պատկեր է առկա նաև տարիքային առանձին խմբերի պարագայում: Մասնավորապես, աղյուսակ 2-ից հետևում

է, որ ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած 18-24 տարեկանների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը 54.8% է, հոդված 215-ի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 30.9%, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 14.3%: Քննարկվող հոդվածի 3-րդ մասով 18-24 տարեկանները նշված ժամանակահատվածում պատասխանատվության չեն ենթարկվել:

ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած 25-29 տարեկանների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը 56.6% է, հոդված 215-ի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 36.3%, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 7.1%: Քննարկվող հոդվածի 3-րդ մասով 25-29 տարեկանները նույնպես նշված ժամանակահատվածում պատասխանատվության չեն ենթարկվել:

ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած 30-49 տարեկանների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը 59.6% է, հոդված 215-ի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 34.3%, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 5.7%: Քննարկվող հոդվածի 3-րդ մասով 30-49 տարեկանները նշված ժամանակահատվածում, ի տարբերություն տարիքային մյուս խմբերի ներկայացուցիչների, պատասխանատվության են ենթարկվել 0.4% դեպքերում:

ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած 50 և ավելի տարեկանների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը 60.0% է, հոդված 215-ի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 38.6%, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 1.4%: ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով 50 և ավելի տարեկանները, ինչպես արդեն նշվեց, նույնպես քննարկվող ժամանակահատվածում պատասխանատվության չեն ենթարկվել:

Հայաստանի Հանրապետությունում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների կապակցությամբ հարկ է նշել նաև, որ նրանց կազմում գերակայում են արական սեռի ներկայացուցիչները: Մասնավորապես, աղյուսակ 1-ից հետևում է, որ վերը նշված ժամանակահատվածում տվյալ հանցավոր արարքը կատարողների կառուցվածքում կանանց մասնաբաժինը կազմում է ընդամենը 9.0%:

Այս հանգամանքը, թերևս, նախ և առաջ կարելի է բացատրել քննարկվող հանցագործության բնույթով՝ ռիսկի դիմելու անհրաժեշտությամբ պայմանավորված լինելով: Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կանայք, ի տարբերություն տղամարդկանց, բնութագրվում են առավել զգուշավորությամբ և, որպես կանոն, գերադասում են չկատարել այնպիսի արարքներ, որոնք կապված են ռիսկի դիմելու անհրաժեշտության հետ:

Հարկ է նշել, որ մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկված անձանց սեռի վերաբերյալ տվյալները, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի տարբեր մասերի, նույնպես կրիմինալոգիական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում (տե՛ս աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3

Տեղեկություններ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի տարբեր մասերով պատասխանատվության ենթարկված անձանց սեռի վերաբերյալ

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	Ընդ.
ընդամենը անձ	43	39	76	77	62	72	123	90	54	53	81	**770**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	25	30	46	62	48	38	58	53	25	30	39	**454**
հոդվ. 215, մ. 2	13	9	26	14	12	32	42	32	29	22	39	**270**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	**2**
հոդվ. 215, մ. 4	5	0	4	1	1	2	23	5	0	0	3	**44**
արական սեռի	40	30	64	67	60	65	117	84	46	51	77	**701**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	23	24	39	54	46	33	54	51	20	28	38	**410**
հոդվ. 215, մ. 2	13	6	23	12	12	31	40	28	26	22	36	**249**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	**2**
հոդվ. 215, մ. 4	4	0	2	1	1	1	23	5	0	0	3	**40**
իգական սեռի	3	9	12	10	2	7	6	6	8	2	4	**69**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	2	6	7	8	2	5	4	2	5	2	1	**44**
հոդվ. 215, մ. 2	0	3	3	2	0	1	2	4	3	0	3	**21**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	1	0	2	0	0	1	0	0	0	0	0	**4**

Ներկայացված աղյուսակից կարելի է հետևություն անել, որ ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած արական սեռի ներկայացուցիչների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը 58.5% է, հոդված 215-ի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 35.5%, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 5.7%: Քննարկվող հոդվածի 3-րդ մասով արական սեռի ներկայացուցիչները նշված ժամանակահատվածում, ի տարբերություն իգական սեռի ներկայացուցիչների, պատասխանատվության են ենթարկվել 0.3% դեպքերում:

ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած իգական սեռի ներկայացուցիչների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով պա-

տասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը 63.8% է, հոդված 215-ի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 30.4%, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 5.8%: ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով իգական սեռի ներկայացուցիչները, ինչպես արդեն նշվեց, քննարկվող ժամանակահատվածում պատասխանատվության չեն ենթարկվել:

Ընդ որում, իրավակիրառ պրակտիկայի (համապատասխան քրեական գործերի և դատավճիռների) մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կազմակերպված հանցավոր խմբերի կողմից թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգ տեղափոխմանը, որպես կանոն, ներգրավվում են 45-55 տարեկան, սովորական արտաքին ունեցող կանայք, ովքեր համեմատաբար քիչ են գրավում մաքսային հսկողություն իրականացնողների ուշադրությունը:

Բացի այդ, որոշ դեպքերում կանայք մաքսային սահմանով ապօրինի տեղափոխվող առարկաները (հատկապես՝ թմրամիջոցներն ու հոգեմետ նյութերը) թաքցնում են իրենց սեռական օրգաններում, ինչը լրացուցիչ բարդություններ է ստեղծում մաքսանենգությունների բացահայտման համար: Բանն այն է, որ, հայերի ազգային հոգեբանության առանձնահատկություններով պայմանավորված, մաքսային հսկողություն իրականացնողները հաճախ հայտնվում են տհաճ վիճակում, երբ ստիպված են լինում զննել կանանց՝ արգելված նյութեր կամ առարկաներ հայտնաբերելու համար: Նրանց խոսքերով՝ «հնարավոր չէ սահմանը հատող բոլոր կանանց ենթարկել գինեկոլոգիական հետազոտության»: Ուստի, մաքսային ծառայողները կանանց նման զննության են ենթարկում միայն այն դեպքերում, երբ հավաստի տեղեկություններ են ունենում նրանց կողմից արգելված նյութեր կամ առարկաներ տեղափոխելու մասին:

Այս առումով մեր կողմից ստացված տվյալներն այլ հետազոտողների տվյալների[1] հետ համեմատելով՝ կարելի է եզրակացնել, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգություն կատարող կանայք բնութագրվում են առավել խորացած հակահասարակական հատկանիշներով՝ այսպես կոչված «հանցածին (կրիմինոգեն) վարակվածությամբ»:

Հայաստանի Հանրապետությունում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների կապակցությամբ հարկ է նշել նաև, որ նրանց կազմում բավականին մեծ մասնաբաժին ունեն օտարերկրացիները: Մասնավորապես, աղյուսակ 1-ից հետևում է, որ վերը նշված ժամանակահատվածում հանցավոր տվյալ արարքը կատարողների կառուցվածքում օտարերկրացիների մասնաբաժինը կազմում է 34.0%, ինչը բավականին մտահոգիչ ցուցանիշ է: Ի դեպ, նրանց մասնաբաժինն առավել մեծ է եղել 2006 թվականին (48.7%), իսկ առավել փոքր՝ 2004 թվականին (18.6%):

Միևնույն ժամանակ, ՀՀ-ում նշված ժամանակահատվածում մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկված օտարերկրացիների կառուցվածքում գերակայում են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները, որոնց

---

[1] Տե՛ս **Абдуллаева Х. А.** Личностная характеристика субъектов контрабанды наркотических средств и психотропных веществ, էջ 269, **Синьков Д. В.** Преступность женщин, состояние. Причины и предупреждение (по материалам Иркутской области) // Актуальные проблемы борьбы с преступностью в Сибирском регионе: мат-лы междунар. науч.-практ. конф. (5-6 февраля 2004 г.). Ч. 1. Красноярск, 2004, էջ 309, **Смолина Т. А.** Социально-типологическая характеристика личности женщины, совершающей преступления, связанные с незаконным оборотом наркотических средств // Сибирский юридический вестник, 2004, № 4, էջ 68:

մասնաբաժինը 67.2% է: Այդ կապակցությամբ ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների մասնաբաժինը կազմում է 5.7%: Ընդ որում, այս շարքում ՀՀ պաշտոնական վիճակագրական հաշվետվություններում ընդգրկված են նաև Վրաստանը և Ուկրաինան, որոնք հրաժարվել են ԱՊՀ անդամակցությունից:

ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկված օտարերկրացիների կառուցվածքում Թուրքիայի քաղաքացիների մասնաբաժինը կազմում է 1.9%, իսկ այլ պետությունների քաղաքացիներինը՝ 25.2%:

Հարկ է նշել նաև, որ մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկված անձանց քաղաքացիության վերաբերյալ տվյալները, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի տարբեր մասերի, նույնպես կրիմինալոգիական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Տեղեկություններ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի տարբեր մասերով պատասխանատվության ենթարկված անձանց քաղաքացիության վերաբերյալ

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	Ընդ.
ընդամենը անձ	43	39	76	77	62	72	123	90	54	53	81	**770**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	25	30	46	62	48	38	58	53	25	30	39	**454**
հոդվ. 215, մ. 2	13	9	26	14	12	32	42	32	29	22	39	**270**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	**2**
հոդվ. 215, մ. 4	5	0	4	1	1	2	23	5	0	0	3	**44**
ընդ. օտարերկրացի	8	16	37	15	14	23	59	28	21	14	27	**262**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	3	12	21	13	8	7	10	6	7	2	6	**95**
հոդվ. 215, մ. 2	5	4	14	2	6	16	30	17	14	12	21	**141**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	2	0	0	0	19	5	0	0	0	**26**
ԱՊՀ քաղաքացի	1	4	3	1	1	2	1	1	0	0	1	**15**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	0	3	0	1	1	2	1	1	0	0	1	**10**
հոդվ. 215, մ. 2	1	1	1	0	0	0	0	0	0	0	0	**3**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	2	0	0	0	0	0	0	0	0	**2**

Իրանի քաղաքացի	4	7	16	5	10	18	50	22	15	10	19	**176**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	0	5	7	3	5	3	2	1	3	0	2	**31**
հոդվ. 215, մ. 2	4	2	9	2	5	15	29	16	12	10	17	**121**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	0	0	0	0	19	5	0	0	0	**24**
Թուրքիայի քաղ.	0	1	0	0	0	0	1	1	0	1	1	**5**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	0	0	0	0	0	0	1	1	0	1	1	**4**
հոդվ. 215, մ. 2	0	1	0	0	0	0	0	0	0	0	0	**1**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
այլ պետ. քաղաք.	3	4	18	9	3	3	7	4	6	3	6	**66**
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	3	4	14	9	2	2	6	3	4	1	2	**50**
հոդվ. 215, մ. 2	0	0	4	0	1	1	1	1	2	2	4	**16**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**

Ներկայացված աղյուսակից նախ և առաջ հետևում է, որ ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած օտարերկրացիների կեսից ավելին (53.8%-ը) պատասխանատվության է ենթարկվել ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 2-րդ մասով: Ընդ որում, նրանց շարքում գերակայում են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկվածները: Այսինքն, եթե ՀՀ քաղաքացիները հիմնականում (46.6%) քրեական պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքները, մշակութային կամ այլ արժեքները մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու համար, ապա օտարերկրացիները մեծ մասամբ կատարում են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի մաքսանենգություն: Ընդ որում, քննարկվող ժամանակահատվածում մաքսանենգություն կատարած ՀՀ քաղաքացիների կառուցվածքում նշված նյութերի մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը ընդամենը 16.8% է:

Միևնույն ժամանակ, ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած օտարերկրացիների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինը 36.3% է, իսկ նույն հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկվածներինը՝ 9.9%: Վերը

ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով օտարերկրացիները քննարկվող ժամանակահատվածում պատասխանատվության չեն ենթարկվել:

Հարկ է նշել նաև, որ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության մաս կազմող մաքսանենգությունների առումով հատկապես աչքի են ընկնում Իրանի քաղաքացիները: Մասնավորապես, աղյուսակ 4-ի վերլուծությունից կարելի է հետևություն անել, որ վերջիններիս կողմից կատարված մաքսանենգությունների կառուցվածքում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսվածները կազմում են 17.6%, 2-րդ մասով նախատեսվածները՝ 68.8%, իսկ 4-րդ մասով նախատեսվածները՝ 13.6%: Քննարկվող հոդվածի 3-րդ մասով, ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում մաքսանենգություն կատարած օտարերկրացիները քննարկվող ժամանակահատվածում քրեական պատասխանատվության ընդհանրապես չեն ենթարկվել:

ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների կողմից կատարված մաքսանենգությունների կառուցվածքում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսվածները կազմում են 66.7%, 2-րդ մասով նախատեսվածները՝ 20.0%, իսկ 4-րդ մասով նախատեսվածները՝ 13.3%: Նույն ժամանակահատվածում ՀՀ-ում Թուրքիայի քաղաքացիների կողմից կատարված մաքսանենգությունների կառուցվածքում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսվածները կազմում են 80.0%, իսկ 2-րդ մասով նախատեսվածները՝ 20.0%: Նշված հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով տվյալ պետության քաղաքացիները քրեական պատասխանատվության չեն ենթարկվել:

Ինչ վերաբերում է այլ պետությունների քաղաքացիներին, ապա պետք է նշել, որ ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում նրանց կողմից կատարված մաքսանենգությունների կառուցվածքում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով նախատեսվածները կազմում են 75.8%, իսկ 2-րդ մասով նախատեսվածները՝ 24.2%: Նշված հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով այդ պետությունների քաղաքացիները ևս քրեական պատասխանատվության չեն ենթարկվել:

Ներկայացված տվյալներից կարելի է հետևություն անել նաև, որ ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած օտարերկրացիների կառուցվածքում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածների բավականին մեծ մասնաբաժինը պայմանավորված է Իրանի քաղաքացիների առավել բարձր հանցավոր ակտիվությամբ: Այսինքն, նրանց մասնակցությամբ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների մաքսանենգության դեպքերի քանակն այնքան մեծ է, որ լուրջ ազդեցություն է ունենում վերոհիշյալ կառուցվածքային առանձնահատկությունների վրա: Հետևաբար, մաքսային հսկողություն իրականացնելիս տվյալ հանգամանքին անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել:

Հայաստանի Հանրապետությունում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունների կապակցությամբ հարկ է նշել նաև, որ նրանց կազմում բավականին մեծ է (շուրջ 60%) միջնակարգ և միջնակարգ հիմնական կրթություն ունեցողների մասնաբաժինը: Վերջիններիս հաջորդում են բարձրագույն, թերի բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցողները (շուրջ 30%): ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում կատարված մաքսանենգությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվածների մնացած մասն են կազմում ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցողները:

Ներկայացված տվյալներից կարելի է հետևություն անել, որ ՀՀ-ում, ինչպես և բազմաթիվ այլ պետություններում, մաքսանենգություններ կատարողները, որպես կանոն, բավականին բարձր կրթական մակարդակ ունեն:

Քննարկվող հանցանքները կատարողների բարոյահոգեբանական առանձնահատկությունները, ինչպես ցույց տվեց մեր հետազոտությունը, գլխավորապես պայմանավորված են նրանց արժեքային կողմնորոշումներով, պահանջմունքների և շարժառիթների համակարգերով: Մասնավորապես, համապատասխան քրեական գործերի նյութերի ուսումնասիրության արդյունքներից կարելի է հետևություն անել, որ նրանց արժեքային կողմնորոշումներն ու պահանջմունքները, որպես կանոն (ավելի քան 90% դեպքերում), պայմանավորված են եղել ճոխ կյանք վարելու (թանկարժեք մեքենա, մոդայիկ հագուստ, բջջային հեռախոս, զարդեր, թմրանյութեր ձեռք բերելու և օգտագործելու) ցանկությամբ: Ինչ վերաբերում է նշված անձանց հանցավոր վարքագծի շարժառիթներին, ապա պետք է նշել, որ նրանք գրեթե միշտ գործել են շահադիտական դրդումներով՝ ապօրինի ճանապարհով հնարավորինս կարճ ժամկետում նյութական մեծ օգուտ քաղելու ձգտմամբ:

Հայաստանի Հանրապետությունում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց քրեաիրավական առանձնահատկությունների կապակցությամբ նախ և առաջ հարկ է նշել, որ նրանց կառուցվածքում նախկինում դատվածների մասնաբաժինը կազմում է 3.25%, ինչը ևս բավականին մտահոգիչ ցուցանիշ է: Ի դեպ, նրանց մասնաբաժինն առավել մեծ է եղել 2004 թվականին (6.98%), իսկ առավել փոքր՝ 2008, 2012 և 2013 թվականներին, երբ նախկինում դատված ոչ մի անձ մաքսանենգության համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել:

Ընդ որում, նշված անձինք նախկինում, որպես կանոն, դատապարտված են եղել ոչ թե մաքսանենգության կամ տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների, այլ սեփականության և մարդու դեմ ուղղված հանցավոր արարքների (հիմնականում՝ հափշտակությունների) համար:

Այս առումով հարկ է նշել, որ կրիմինալոգիական առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկված անձանց հանցավոր անցյալի վերաբերյալ տվյալները, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 215-ի տարբեր մասերի (տե՛ս աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Տեղեկություններ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի տարբեր մասերով պատասխանատվության ենթարկված անձանց հանցավոր անցյալի վերաբերյալ

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	Ընդ.
ընդամենը անձ	43	39	76	77	62	72	123	90	54	53	81	770
այդ թվում՝												
հոդվ. 215, մ. 1	25	30	46	62	48	38	58	53	25	30	39	454
հոդվ. 215, մ. 2	13	9	26	14	12	32	42	32	29	22	39	270
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	2
հոդվ. 215, մ. 4	5	0	4	1	1	2	23	5	0	0	3	44

նախկինում դատված *այդ թվում՝*	3	2	3	3	0	3	2	5	0	0	4	**25**
հոդվ. 215, մ. 1	0	0	1	1	0	0	1	3	0	0	0	**6**
հոդվ. 215, մ. 2	2	2	2	1	0	2	0	2	0	0	2	**13**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**
հոդվ. 215, մ. 4	1	0	0	1	0	1	1	0	0	0	2	**6**
նախկինում չդատված *այդ թվում՝*	40	37	73	74	62	69	121	85	54	53	77	**745**
հոդվ. 215, մ. 1	25	30	45	61	48	38	57	50	25	30	39	**448**
հոդվ. 215, մ. 2	11	7	24	13	12	30	42	30	29	22	37	**257**
հոդվ. 215, մ. 3	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	**2**
հոդվ. 215, մ. 4	4	0	4	0	1	1	22	5	0	0	1	**38**

Ներկայացված աղյուսակից նախ և առաջ հետևում է, որ ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած նախկինում դատվածների կեսից ավելին (52.0%-ը) պատասխանատվության են ենթարկվել ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 2-րդ մասով: Ընդ որում, նրանց շարքում, ինչպես և օտարերկրացիների պարագայում, գերակայում են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկվածները:

Միևնույն ժամանակ, ՀՀ-ում 2004-2014 թվականների ընթացքում մաքսանենգություն կատարած նախկինում դատվածների կազմում ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին և 4-րդ մասերով պատասխանատվության ենթարկվածների մասնաբաժինները 24.0-ական % է: Վերը ներկայացված աղյուսակից հետևում է նաև, որ ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 3-րդ մասով նախկինում դատվածները քննարկվող ժամանակահատվածում պատասխանատվության չեն ենթարկվել:

Քննարկվող անձանց քրեաիրավական այլ առանձնահատկությունների առումով հարկ է նշել, որ նրանք հանցանքը հիմնականում կատարել են միանձնյա: Մասնավորապես, աղյուսակ 1-ից հետևում է, որ կազմակերպված խմբի կողմից կատարված մաքսանենգությունների մասնաբաժինը կազմում է ընդամենը 5.7%, ինչը, սակայն, բավականին մտահոգիչ ցուցանիշ է: Բացի այդ, պաշտոնական վիճակագրական տվյալներից չի երևում, թե քննարկվող հանցանքների ո՛ր մասն է կատարվել կազմակերպված չհամարվող խմբերի (նախնական համաձայնությամբ կամ առանց նախնական համաձայնության) կողմից: Միաժամանակ, հաշվի առնելով մաքսանենգությունների (հատկապես՝ խմբակային) լատենտայնության բարձր մակարդակը, պետք է նշել, որ քրեաիրավական վերոհիշյալ ցուցանիշները խիստ պայմանական են:

Այսպիսով, մեր կողմից իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում մաքսանենգություն կատարողների կազմում գերակայում են 30-49 տարեկան, արական սեռի, նախկինում չդատված, ՀՀ քաղաքացիություն, միջնակարգ և միջնակարգ հիմնական կրթություն ունեցող, մասնավոր ձեռնարկատիրական գործունեություն (այդ թվում՝ չգրանցված) իրականացնող ան-

ձինք, ովքեր հաճախ աշխատանքի (զբաղմունքի) բերումով կամ անձնական նպատակներով հնարավորություն են ունենում հատելու երկրի պետական (այդ թվում՝ մաքսային) սահմանը: Անչափահասները նշված ժամանակահատվածում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ընդհանրապես չեն ենթարկվել:

Բացի այդ, հետազոտվող անձանց կեսից ավելին պատասխանատվության են ենթարկվել ՀՀ քր. օր.-ի հոդված 215-ի 1-ին մասով՝ մաքսանենգության հասարակ տեսակի համար: Նրանց հաջորդում են նույն հոդվածի 2-րդ մասով պատասխանատվության ենթարկվածները, որոնց շարքում գերակայում են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի մաքսանենգության համար պատասխանատվության ենթարկվածները:

ՀՀ-ում մաքսանենգության համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կազմում բավականին մեծ մասնաբաժին ունեն օտարերկրացիները, որոնց շարքում գերակայում են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիները: Ընդ որում, եթե ՀՀ քաղաքացիները հիմնականում քրեական պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքներ, մշակութային կամ այլ արժեքներ մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու համար, ապա օտարերկրացիները մեծ մասամբ կատարում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգություն:

ՀՀ-ում մաքսանենգություն կատարողների անձը բնութագրող քրեաիրավական հիմնական առանձնահատկություններից է նաև այն, որ նշված արարքները հիմնականում կատարվում են միանձնյա և առաջին անգամ:

ОСОБЕННОСТИ, ХАРАКТЕРИЗУЮЩИЕ ЛИЧНОСТЬ ЛИЦА, СОВЕРШИВШЕГО КОНТРАБАНДУ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Гор Мирзоян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

В статье представлена характеристика личности преступника, совершающего контрабанду в Республике Армения. В данном контексте анализируются характеризующие его социально-демографические, нравственно-психологические и уголовно-правовые особенности.

На основе анализа материалов собственного исследования, автор представляет основные характерные черты личности лиц, совершающих указанное преступление, и обосновывает необходимость изучения названных личностных особенностей, отмечая, что это имеет важное как научное, так и практическое значение.

CHARACTERISTICAL PECULIARITIES OF THE PERSONALITY OF CRIMINAL INVOLVED IN SMUGGLING IN THE REPUBLIC OF ARMENIA

Gor Mirzoyan
Post-graduate Student of the
YSU Chair of Criminal Law

The characteristics of criminals involved in smuggling in the Republic of Armenia are presented in this paper. In this context, the paper shows their social-demographic, moral-psychological and criminal-legal peculiarities: social status and social role, gender, age, family status, etc.

After analyzing the materials of research the author presents a brief overview of the mentioned peculiarities and shows that fighting against these crimes cannot be effective without a complex research of persons committing smuggling. Thus a personal characteristics of mentioned persons acquire a special research and practical value.

Բանալի բառեր - *մաքսանենգություն, հանցագործի անձ, մաքսային սահման, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառություն, սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկություններ, բարոյահոգեբանական առանձնահատկություններ, քրեաիրավական առանձնահատկություններ:*

Ключевые слова: *контрабанда, личность преступника, таможенная граница, незаконный оборот наркотиков и психотропных веществ, социально-демографические особенности, нравственно-психологические особенности, уголовно-правовые особенности.*

Key words: *smuggling, personality of criminal, custom border, trafficking of drugs and psychoactive substances, social-demographic peculiarities, moral-psychological peculiarities, criminal-legal peculiarities.*